

տուածններու եւ քուրմերու. կարելի է օ-
րինակները դեռ աւելի բերել: Շնորհիւ ա-
ւանդութեանց վրայ կառչած ըլլանուն,
որ Արեւելքի յատուկ է ամէն առեւ, 1700
տարի առաջուան սովորութիւնները կըր-
նային Յիսուսի ժամանակ մնացած ըլլալ,
ինչպէս որ նոյն տրամաբանութեամբ՝
Նոր կտակարանի շատ մը սովորոյթներ
դեռ կենդանի են Պաղեստինի մէջ: Դո-
մինիկեան կարգէն Հ. Ժաննսէն այս մա-
սին դրած է հիշանալի հատոր մը, ուր կը
նկարագըրէ Մովսէսի երկրին այսօրուան
վրանաքնակները⁵:

ՀԱՐԱՆԻՔԻ ՀԱՏՈՒԾԸ

ՄԱՏԹԵՈՍ ԻԲ. 1-13

Յիսուս դարձեալ խափը սկսաւ անոնց առականերով եւ ըսաւ. «Երկնքի արքայութիւնը նման է թաղաւորի մը, որ իր որդւոյն չարասնիքն ըրաւ։ Ծառաները զրկեց չարասնիքի կանչելու հրաւիրեալներէն, բայց անոնք չուզեցին դալ։ Դարձեալ ուրիշ ծառաները զրկեց պատուիրելով. Ըսէ՛ք հրաւիրեալներուն... Հրամեցէ՛ք չարասնիքի։ Բայց անոնք կարեւորութիւն չտաւով՝ մէկը ագարակը դնաց, միւսն իր առուտուրին։ Եւ ուրիշներ ըռնելով աւ. Այն ատեն ծառաններուն ըսաւ. չարասնիքը պարտատ է, բայց հրաւիրեալները արժանի չէին. դացէք, ուրեմն, ճարտաներու զլուխները եւ զըրաններու վրայ ելլելով, ո՛վ որ գտան՝ հաւաքեցին, չարերն եւ բարիները, ու հալոյանիքը լեցուցեցաւ կոչանկաններով։ Երբ թաղաւորը մտաւ բաղմա-կանները տեսնելու՝ չոն նշմարեց մարդ մը, որ չարասնիքը զգեստ չէր հագած եւ ըսաւ անոր. Ըն-կեր, ի՞նչպէս հոս մտար առանց չարասնիքի ըզ-գեստ ունենալու. մարդը պարտանձեցաւ։ Այն ա-տորը ոտքերն ու ձեռքերը եւ հանեցէ՛ք արտաքին խաւարին մէջ. չոն թող լայն ու ակռաները կրճտէ՛ք։

5. «Նախիկին ազգային սովորութիւնք հարսանեաց» տիտղոսի տակ, ձեռագրէի մը մէջէն հայկական Ռեթթ թուականով (1610), կը համառօտէ «Բազմավէպ»ի յօդուածագիրը (1889, էջ 232), առաւանդութեան խորհուրդին վրայ ճառ մը, որ Տաթեւացիին կամ անոր ժամանակակից մէկուն մը ըլլաւ կ'ենթադրէ: Ճառին հեղինակը իւրաքանչիւր սովորութեանց մեկնութիւնը կը դնէ եւ Ս. Գրքի վկայութիւններով եւ օրինակներով

Այս թափառաշրջիկներու մէջ մնացած է ղեռ հին սովորութիւնը. չէյսը իբր ցեղապետ՝ երբ կոչունքի հանդէսներուն հրաւիրէ, ինքը հրաւիրեալներուն հետ չի նստիր, այլ կը շրջի անոնց մէջ եւ կը հակէ որ ամէն ինչ լաւ երթայ, ճիշտ ինչպէս Մատթէոսի կոչնառէրը կ'ընէ (ԻՔ. 11) երբ կ'անդրադառնայ կարգուձեւի անպահպանութիւնը:

TOMMASO FEDERICI

ԹՐԳՄ. Հ. ՔԵՐՈՐԵՆ ԶՐԱՔԵԱՆ

ՀԱՅԿԱՆ ԺԴ. 15-24

Սեղանակիցներէն մէկը այս խօսքը լսելով՝ ըսաւ.
«Երանի՛ր անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ
ճաշ պիտի ուտէ»։ Յիսուս պատասխանեց.
«Մարդ մեծ ընթերց պատրաստեց եւ շատեր հրաւիրեց։
Ընթերցի ժամուռ, իր սպասաւորը զրկեց հրաւի-
րեալներուն» ըսելով. եկէ՛ք, անա՛մեն ինչ պա-
տրաստ է։ Բայց մէկիկ մէկիկ ամէնէն ալ սկսաւ
հրաժարէ։ Առաջինն ըսաւ. Աղարակ դնեցի եւ
պէտք եմ երթալ տեսնել. Կ'աղաչեմ, հրաժարեմ
համարէ զիս։ Միւսը ըսաւ. Հինգ լուծ եզ դնեմ
եւ կ'երթամ զանոնք փորձելու. կը լսուրեմ, հրա-
ժարեմ նկատէ զիս։ Ուրիշ մըն ալ ըսաւ. Կին տո՛ւ,
ուստի չեմ կրնար զալ։ Եւ սպասաւորը զսոռնա-
լով՝ պատուեց իր տիրոջ այս բոլորը։ Այն ատեն
տանտէր բարկացած՝ ըսաւ սպասաւորին. Իսկոյն
դնա՛՛ր քաղաքին հրապարակները եւ փողոցները եւ
հոս փողոց ուղեատները, խեղճըր, կաղերն ու կոյ-
րերը։ Սպասաւորը ըսաւ. Տէ՛ր, ինչ որ հրամա-
նեցի՛ր՝ կատարուեցաւ եւ զեւ տեղ կայ։ Ոչքէն ը-
սաւ սպասաւորին. Գնա՛՛ր ճամբաներն եւ ցանկա-
պատարէ եւ ստիպի՛՛ր որ մտնեն, որպէս զի տունս
լեցուծի։ Կ'ըսեմ ձեզի, որ այն հրաւիրեալներէն ոչ
ոք իմ ընթերցէս պիտի ճաշակէ»։

իլը հաստատուէ: Ասիկց զատ հարսանիքի հանդէսներուն հայկական հին սովորութեան նմոյշ մը նկարագրած է «Բաղձալէպ» շուրջ դար մը առաջ, «Հանդէս հարսանեաց Մուշի դաւառի մէջ» տիտղոսով (1867, էջ 307): Աւելի մանրամասնութիւններու համար, տե՛ս Հ. Վ. Հացունիի «Հայուհին պատմութեան առջեւ», Վենետիկ, 1936, էջ 71-79, և «Պոմ. հին հայ տարագիրն», 1924, էջ 296-300:

ԶԵՔՈՒՇՆ ԱՆԻՐԱԿՈՒԱԾ

Չնքուշը, որ ԺԱ. դարու վերջին քա-
ռորդին, Անիէն գաղթող խումբ մը Հայ
կաշկողործներու կողմէ հիմնուած է Բնա-
բեդի աւերակներուն վրայ¹, դուրս է ձգ-
ուած եւրոպական և ամերիկեան քարտէս-
ներէ :

Թուրքիոյ կողմէ՛ մեր ծննդավայրի շէր-
ջանակը - Խարբերդէն Տիգրանակերտ -
դրաւուելէ (1514) յետոյ, ԺԶ-ԺԹ դարի
սկիզբը, Զնքուշ տեղական թուրք վար-
չութիւն ունեցած է, այլ կառավարուած
է բնիկ աւանապետներով - նախ Հայ Իշ-
խան՝ Ըլլալով բնակչութեամբ միատարր
Հայ -, յետոյ՝ մահմետական Պէշ : Իսկ
թրքական վարչութիւն հաստատուելէն
ետքն ալ, մինչեւ Մեծ Եղեռնը (1915),
եղած է միւստիքուրիւն, կառավարական
ամենացած աստիճանի վարչութիւն, յա-
տուկ ոչ թէ՛ զիւղաքաղաքի կամ քաղաքի,
այլ 1-200 տուննոց զիւղերու : Եւ այս՝
հակառակ այն իրողութեան, որ Զնքուշը
այդ դարերուն միշտ ունեցած է 10․000է
աւելի բնակչութիւն² :

Թէ ի հեճուկս հայերուն է եղած այս
կարգադրութիւնը, որ աննպաստ էր հա-
յոց ո՛չ միայն քաղաքականապէս այլ նաեւ
տնտեսապէս, յայտնի է այն իրողութե-

նէն, որ Զնքուշի հայերը միշտ բողոքած են անոր դէմ: Այդպիսի բողոքի մը կը հանդիպինք Զնքուշէն Դեկտ. 1, 1908 թվականի բերկար թղթակցութեան մը մէջ: Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքին ներկայառուած 6 կէտերէն 4րդն է հետեւեալը.

«4 - կը խնդրեմք, որ տեղս Գայմագա-
մուքեան վերածուի՝ բուրք ազաներու
բռնակալութիւնը հակազդելու, եւ եթէ
կարելի է Մամուրէք իւր Ազիզի (Խար-
բէրդ) կուսակալութեան կցուի, քանի որ
քէ մօտաւորութեան եւ քէ առեւտրական
տեսակէտիւ այնտեղի հետ աւելի հաղոր-
դակցութեան մէջ ենք («Մէնմուշալի Այս-
սէն», 1908, թիւ 629) :

Թուրք կառավարութեան այս վարչական կարգադրութիւնը, միացած զէպլի Զնբուշ ուղեւորութեան ճանապարհներու անապահովութեան՝ աւաղ ա կ ա բ ա ր ո յ քուրտերով շրջապատուած Ը Լ Լ ա Լ ո վ, պատճառ եղած է, որ օտար – եւրոպացի եւ ամերիկացի – ուղեւորներ մինչեւ Զնբուշ չճամբորդեն, մանաւանդ երբ կառավարութիւնը չէր երաշխաւորեր անոնց կեանքի անվտանգութիւնը, և օտար պատմութիւններէն ու քարտէսներէն դուրս ձգուի Զնբուշը:

Այս թիւին մէջ չեն թրքաց 300 տուները: Դարձեալ, Բիւզանդեան, 1909, Նոյ. 10/23 թուին մէջ, Չնքուշի Հայոց Առաջն. փոյս.՝ Եղբասի, Հայ-հռովմ. Առաջն. փոյս.՝ Անտոնի, Էւ բոզմ. Հայոց հոգեւոր պետ՝ Արմենակի ստորադրութեամբ նամակի մը մէջ՝ Չնքուշի բնակչութիւնը կը յիշուի «1500 տուն բնակիչ ունեցող»: Իսկ Չնքուշի իւրաքանչիւր հայ տան անդամներու թիւը միջին հաշուով 8-10 էր, համաձայն միախոնարհներու մարդահամարին:

- [illegible]